



ԱՐԵՎՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՉԱՅ Կ. ԽԱԶԻ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԻԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

30 Սեպտ. — 3 Հոկտ. 1928


ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՒ ԲԱՆԱԶՆԵՐ



Իպ. Ա. Քիրապետյան — 21, Ռի. Քիրապետյան, Մարտի 11

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՒՐՈՊ. ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ

ԱՌԺԱՄԵԱՅ ԿԵՂՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



Ամբողջ չորս տարի բաւական եղաւ որ Ֆրանսայի մէջ 40,000ի մաս մեր գաղթականութիւնը, շնորհիւ երկրի կազմակերպուած մ.ձ ճարտարարուեստին որոշ չափով նիւթական կոուսններ ստեղծէ իրեն, ու դուզընթացարար անոր աշխատի իր ազգային պարտականութիւնը գլուխ հանել ու այսպէս ձեւ ու մարմին տալ հայ հաւաքականութեան մը:

Կարեւոր կեղրաններու մէջ արդէն կեանք առին, ազգային օսկաններ, հրատարակուեցան օրաթերթեր, ծնունդ առին համաքաղաքացիական, կուլտուրական, գեղարուեստական միութիւններ: Դպրոցը և եկեղեցին ազգային պահպանման ամենամեծ այս ազգակները, արդէն հրամայական պահանջք կը ներկայանային ամէն տեղ ուր որ ափ մը հայսւթիւն ըզն գրած էր: Տիրող այս շարժումին մէջ, Հայ կինը իր մասնակցութեան բաժինը պէտք է բերեր. երբ Հայու դարսւոր լո՛շնամին կտարակած ու ջարդ ու փշուր ըրած էր, հրապարակի Հայ ոյժերը, անհրաժեշտ էր որ ան թօթափեր թմբութեան ու անգործութեան լուծը՝ ասպարէզ իջներ ու ձեռք երկարեր Հայ տղամարդուն:

Ազգ. կազմակերպութեան գործին մէջ Հայ կնոջ դուր-գուրտտ սիրտը անհրաժեշտ էր Հայու ճակատագրին անբաժան ընկերը եղող դժբաղդութիւնը մեղմելու համար: Մեր նուիրական հայրենիքին մէջ օրը օրին կատարուած քաղաք. հալածանքները, բանտարկեալներու և աքսորեալներու թշուառ վիճակը, անոնց ձգած անտէր ու անպատասպար ընտանիքներու ու զաւակներու վիճակը, երկրէն դուրս փախած քաղաքական հալածեալներու անօգ կացութիւնը, գաղութահայութեան մէջ մեր երիտասարդութեան սպառ-

նացող վտանգները ու վերջապէս հայ մանուկներու դաստիարակութեան ու փրկութեան գործը, լաւագոյն պահանջներն էին, հրաւէր կարգալու համար Հայ կնոջ, որպէս զի ասպարէզ իջներ:

Ներկայ տարուայ սկիզբներուն էր որ ծնունդ առաւ մեր Կ. Խաչը, ունենալով առժամեայ Կեդր. վարչութիւն մը տեղւոյս մէջ, որուն առաջին գործը եղաւ, հիմնուած՝ Ամերիկահայ Կ. Խաչի ծրագիր կանոնագրի վրայ, հրատարակութեան տալ առժամեայ ծրագիր կանոնագիր մը մեր պայմաններուն յատուկ, ու անմիջապէս կազմակերպական գործին լծուիլ:

Մասնաւոր հրահանգներով մեր ծրագիրներէն ուղարկեցինք Լիօն, Վիէն, Արտէշի շրջանը, Տէսին, Վալանս, Փօնտը-Շէրի, Սէն-Շամօն, Սէնթ Էթիէն, Փարիզ, Պրիւքսէլ, Պօռտօ, Նիս, Պէլֆօռ, Կարտան, Կորնօպլը, Մօնթէլիէ: Մասնաւոր շրջաբերականներով հրահանգած ենք զիրենք օր առաջ կազմակերպուելու ու ուրախ ենք այսօր որ արդէն Եւրոպահայ Կ. Խաչի կանոնաւոր ու լուրջ կազմակերպութիւնը արդէն կատարուած իրողութիւն մըն է:

Մասնաճիւղեր սենինք, Մարսէյլ 60 անդամ - անդամուհիներով, Լիօն 22, Վալանս 51, Փրիւս կապուած Վալանսի 7, Վիէն 28, Կորնօպլը 18, Տէսինի մասնաճիւղէն 17: Յաւ ի սիրտ պէտք բռել որ, հակառակ մեր բոլոր թափած ջանքերուն կարելի չէ եղած ցարգ մասնաճիւղեր ունենալ, Կարտանի, Նիսի, Փարիզի և Պելճիգայի մէջ:

Բոլոր մասնաճիւղերուն հետ կանոնաւոր կերպով թղթակցութիւններ պահած ենք, մեր կարողութեան և ժամանակի ներսը չափովը անշուշտ, ջանացած ենք նոյն իսկ իրենց հայթայթել ընդհանուր ժողովներու զբաղման նիւթեր. հրահանգած ենք իրենց ամէն ժողովէ առաջ բանախօսներ հրաւիրել: Կեդր. վարչութիւնս հազիւ թէ այս ծանր ու դժուար գործին լծուած էր, երբ անակընկալօրէն վրայ հասաւ Պուլկարիայ երկրաշարժի աղէտը, իրեն կիջնար, կազմակերպական գործը շարունակելով միասին, օգնութեան գործը կազմակերպել, ու անմիջական օգնութիւն հասցնել: Կարճ ժամանակաւայ մէջ, մասնաճիւղերով միասին

14,000 ֆրանքի մօտիկ գումար մը «Յառաջ» օրաթերթի միջոցով ուղարկուեցաւ։ Հոս վարչութեանս համար ցուալի կէտ մը կայ խոստովանելիք, այն է որ հաւաքուած գումարը իր իսկ անունով ուղղակի գործի մը չի յատկացուեցաւ (օրինակի համար, զպրօքի մը վերաշինութեան խնդիր) այս տկար կէտը մեր կազմակերպութեան սկզբնական շրջանին մեր անփորձութեանը պէտք է վերագրել։

Հանգանակութեան գործը վերջացնելէ յետոյ անհրաժեշտ էր մեզ համար հիմնադրամ մը մէջտեղ բերել, առայդ ըլլոր մասնաճիւղերուն հրահանգած ենք, բացման հանգէսներ սարքել և կանոնաւոր կերպով ամսականները դանձել։

Մինչև օգոստոս ամսոյ վերջ իրբեւ ընդհ, մուտք ունեցած ենք 15,855. 50 պատրաստ ունինք, 3966. 66, ասոր մէջ չէ անշուշտ իւրաքան իւր մասնաճիւղի հարիւրին 25ի իրաւունքը, ինչպէս նաև աղէտեալներու համար հաւաքուած գումարը։

Վեց ամսուայմեր գործունէութեան ընթացքին, կարևոր զբաղման նիւթ եղած է, կառավարութեան կողմէ վաւերացման խնդիրը, ու որքան որ այս ուղղութեամբ միջոցներ ձեռք առնուած են, յարաբերութեան մտած ենք տեղական բարեգործական միութեանց ներկայացուցիչին հետ (Union Protectrice des Enfants) բայց այսու հանգերձ, յարմար դատած ենք Պատք. ժողովիդ ձգել խնդրոյ կարգադրութեան ձեւը։ Այս մասին վարչութիւնս իր ժամանակին դիմած է նաև Հայաստանի Հ. պատուիակութեան, որ նոյնքան անյարմար գտած է Կ. Խաչ անունով օտարներուն մէջ գործելը ու մեզ առաջարկած է Հայկական Ռըլիֆ անունը վերցնել։

Վարչութիւնս իր կազմութեան օրէն սկսած պարտականութիւն սեպեց կանոնաւոր կերպով յարաբերութեան մէջ մանեց, տարիներու կեանք ու փորձառութիւն ունեցող Ամերիկահայ Կ. Խաչի հետ, ու այսօր ուրախ ենք յայտարարելու որ երկու քոյր կազմակերպութիւններու յարաբերութիւնները կանոնաւոր և սերտ են, ու որքան որ ժամանակի սղութեան պատճառով չի կարողացանք, հակառակ մեր բուն ցանկութեան իրենց ութերորդ պատգ. ժողովին համար մեր պատգամաւորը նշանակել՝ իրենք արդէն մեր

այս անդրանիկ Պատգ. Ժողովին մէջ ունին իրենց ներկայացուցիչը յանձին Լ՛նկ. Արշակ Զամալեանի :

Գործելու ասպարէզը լայն, պահանջքը մեծ, բայց ժամանակի կարճութիւնը, մեր ուժերու անբաւարարութիւնը, կեանքի խոչնդոտները, մնայուն գործող ոյժի մը պակասին համար, այսքան անկատար կերպով մենք կը ներկայանանք Պատ. Ժողովիդ ու իրեն կը ձգենք սկսուած ու կազմակերպուած գործ մը, աւելի հաստատուն ու լայնածաւալ գեանի մը վրայդնելու այս կազմը, որը ոչ միայն Հայ կնոջ պատիւին ու անուանը կապուած է, այլ ընդհանուր Հայութեան: Մենք ձեզ կը բերենք օրակարգի նիւթեր որոնք, որքան որ իւրաքանչիւր մասնաճիւղի ընդհանուր ժողովներու մէջ ձեռուած ու քննուած են, այս տեղ է որ ձեռ ու մարմին առած կեանք պիտի առնեն :

Մեզ համար պարտականութիւն կը սեպենք մեր շքնորհակալութիւնները յայտնել, Ամերկահայ Կ. Խաչի ներկայացուցիչ Լ՛նկ. Արշակ Զամալեանի, Հ. Յ. Դաշնակցութեան Եւրոպայի Կեդր. Կոմիտէին, Հ. Յ. Դաշնակցութեան շրջաններու կոմիտէներուն, որոնք իրենց գործոն մասնակցութիւնը բերած են, մեր Եւր. Կ. Խաչի կազմակերպական գործին մէջ :

Սրտանց մաղթելով ձեզ կար ու կարողութիւն. յանուն Եւր. Կ. Խաչի Կեդր. վարչութեան, կ'ողջունենք մեր այս անդրանիկ Պատգ. Ժողովը :

Ի զիմաց վարչութեան

Պաննոպետոնի	Վ. Ասենաղպուրոնի	Ասենոպետոնի
Հ. Գ. Պարթաւաբեան	Շ. Ալան	Տ. Հ. Արեւիկայեան

29 Մեպտ. 1928
Մարտէյլ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ Կ. ԽԱՉԻ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

30 Սեպտ. — 3 Հոկտ. 1928

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՒ ԲԱՆՍԱԶԵԻՆԵՐ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

1. ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՆ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Պատգամաւորական ժողովը առժամեայ դիւանի մը ղեկավարութեամբ քննելով պատգամաւորներու լիազօրագիրները և համաձայն առժամեայ Կ. Վարչութեան և համապատասխան պատգամաւորներու առաջարկին, իր վրայ առնելով Վալանսի, Լիօնի և Վիէնի մասնաճիւղերու մէկական ձայներու բաշխումը, ինչպէս և Մարտիլի մասնաճիւղի պատգամաւորութեան շուրջ տարաձայնութիւններու կարգազրութիւնը, կը վաւերացնէ իր օրինականութիւնը հետեւեալ կազմով.—

ՄԱՐՍԷՅԻԼԻ մասնաճիւղէն	1	պատգամաւոր
Լիօնի	2	»
Վիէնի	2	»
ՎԱԼԱՆՍԻ	2	»
ՏԷՄԲՆԻ	1	»
ԿՈՒՆՕՊՈՒԼԻ	2	»
ՏԷՄԲՆԻ	1	» (1)
Առժամեայ Կ. Վարչութենէն	1	ներկայացուցիչ
Ամերիկ. Կ. Խաչի Կ. Վարչութենէն	1	»

(1) Տեսիկի պատգամաւորը վերջին օրը հասած ժողովին

2. ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՉԱՅՆԵՐ

Պատգամաւորական ժողովը կարող է իր նիստերուն հրաւիրել, խորհրդակցական ձայնի իրաւունքով առժամեայ Կ. վարչութեան բոլոր ազատ անդամները և հետեւեալ ընկերուհիները ու ընկերները,—

Ընկերուհի	Ղաղարեան
»	Քիրրիւածեան
»	Չաքարեան
»	Փափաղեան
Ընկեր	Սերէնիկիւեան
»	Պաղտասարեան
»	Պապիկեան
»	Պասմաճեան
»	Կակօսեան
»	Իսրայէլեան

3. ՕՐԱԿԱՐԴ

Պատգամաւորական ժողովը քննելով առժամեայ Կ. վարչութեան առաջարկած օրակարգի նախադիժը, ինչպէս նաեւ մասնաճիւղերէն եկած առաջարկները կը սահմանէ իր զրազույցներուն համար հետեւեալ օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Զեկուցումներ մասնաճիւղերու և առժամեայ Կ. վարչութեան:
2. Եւրոպահայ Կ. Խաչի անուան փոփոխութեան հարցը:
3. Հ. Կ. Խաչի օրինականացման հարցը:
4. Հ. Կ. Խաչի փոխ յարարերութիւնները քչր կազմակերպութիւններու հետ:
5. Քննութիւն և վաւերացում Հ. Կ. Խաչի կանոնադրութեան.
6. Մանուկներու և ծննդաբեր կանանց պաշտօնաւորութեան գործը:
7. Ժողովուրդի առողջապահութեան և բժշկական կարիքներու սատարելու խնդիրը:
8. Հայ կանանց աշխատանքի պաշտօնաւորութեան հարցը:

9. Մատաղ սերունդի ազգային դաստիարակութեան խնդիրը.

10. Մյլ եւ այլ կազմակերպական հարցեր.

11. Նախահաշիւ 1928 — 1929 տարեշրջանի.

12. Ընտրութիւն Կ. Վարչութեան.

Կ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՄՇՏԱԿԱՆ ԴԻՒԱՆԻ ԵՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄ ԲԵՐՈՒ

Պատգամաւորական ժողովի մշտական ղիւանի համար կ'ընտրուին ընկ. Ա. Զամալեան՝ ատենապետ և ընկերուհի Լիւսի Նորաշխարհեան՝ ատենաղագիր:

Դիւանին կը յանձնարարուի նաև բանաձևերու նախագծեր պատրաստելու գործը:

Հաշուեքննիչ և նախահաշուի յանձնախմբի համար կ'ընտրուին ընկերուհիներ Զոմաքլեան, Թորիկեան Նորաշխարհեան և ընկեր Շ. Թաշճեան:

Կանոնադրի քննութեան յանձնախումբին համար կ'ընտրուին ընկերուհիներ Սէրէնկիւլեան, Պաղտասարեան, Իսրայէլեան Ազանեան և ընկեր Ա. Զամալեան:

ԲԱՆԱԶԵՒ ԱՌԺԱՄԵԱՅ Կ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԵՒ ՄԱՄՆԱՃԻՂԵՐՈՒ ԲԱՐՈՅ. ԿՈՐԾՆԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Արեւմտեան Եւրոպայի Հայ Կարմիր Խաչի Պատգամաւորական ժողովը լսելէ յետոյ Լիօնի, Վալանսի-Վիէնի գրաւոր ղեկուցումները, առժամեայ Կ. Վարչութեան տեղեկատուութիւնը Մարսէլի, Տէսինի, Կրընօպլի և միւս մասնաճիւղերու մասին և նոյն Կ. Վարչութեան գրաւոր ղեկոյցը, իր կատարած աշխատանքներու մասին կը նկատէ որ.—

Ա. Վալանսի, Լիօնի, Վիէնի մասնաճիւղերը կազմուած 15 — 20 անդամներով, վեց ամսոյ կարճ ժամանակի ընթացքին աչքառու կերպով աճած և զարգացած են: Մարսէլի մասնաճիւղը եւս ունեցած է նոյն աճումն ու զարգացումը իր անդամներու թիւը հասցնելով 60 ի, սակայն զժբաղտարար կարգ մը ներքին անհարթութիւններու պատճառաւ անկանոն վիճակի մատնուած է:

Բ. վալանսի, Լիօնի, վիէնի և մանաւանդ Մարսէլի մասնաճիւղի հանդէսները անցած են յաջող և փայլուն, թէ նիւթապէս և թէ բարոյապէս:

Գ. Մասնաճիւղերը կենդանի արձագանք են տուեր առժ. Կ. վարչութեան կոչին օգնութեան հասնելու Թիւրքի աղետեալներուն: Այս գործին մէջ անոնց եռանդը և մասնաւորապէս Մարսէլի մասնաճիւղին եռանդը եղած է խիստ գնահատելի:

Դ. Առժամեայ Կ. վարչութիւնը ջանք չէ խնայած մասնաճիւղերը դորացնել, և անոնց հետ նամակներով ու շրջարեւականներով կենդանի կապ պահպանած՝ և յաճախ ալ օրակարգի նիւթեր մասնանշած՝ ներքին դրազումներու համար:

Այս ամենուն նկատառութեամբ պատգամաւորական ժողովը թէ՛ մասնաճիւղերու և թէ՛ առժամեայ Կ. վարչութեան գործնէութիւնը կը դանէ լիութի գոհացուցիչ և գնահատելի:

ԲԱՆԱԶԵՒ ԱՌԺ. Կ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ, ՀԱՇԻՒՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ.

Պատգամաւորական ժողովը ծանօթանալով հաշուերընիչ և նախահաշուի յանձնախմբի՝ գեկուցումը առժամեայ Կ. վարչութեան նիւթական գործունէութեան մասին հաճոյքով կը հաւատէ, որ առժամեայ Կ. վարչութեան, հաշիւները պահուած են կանոնաւոր կերպով:

Սրա հետ միասին պատգամաւորական ժողովը սխալ կը համարէ որ առժամեայ Կ. վարչութեան հաշիւներու մէջ մուտք և ելք չեն արձանագրուած այն գումարները, որ մասնաճիւղերը Կ. վարչութեան հրահանգով իսկ Թիւրքի աղետեալներուն ի նպաստ ուղարկած են «Յառաջ» թերթին, և կը հրահանգէ նոր Կ. վարչութեանը շտկել այս սխալը՝ առժամեայ Կ. վարչութեան նիւթական գործնականութեան լրիւ պատկերը վերականգնելու համար:

ԲԱՆԱԶԵՒ Կ. ԽԱԶԻ ԱՆՈՒԱՆ ՄԱՍԻՆ.

Նկատի ունենալով—

1- Որ Եւրոպայի մէջ կան մի քանի Հայ Կարմիր Խա-

չեր — ինչպէս Յունաստանի և Ռումանիայի Հայ Կարմիր Խաչերը,

2. Որ Եւրոպահայ Կարմիր Խաչ կոչուող մեր կազմակերպութեան գործունէութեան դաշտը կը կազմեն փաստօրէն մըայն Ֆրանսան և արեւմտեան Եւրոպայի մի քանի երկիրները, ուր սակաւաթիւ հայեր կան,

Պատգամաւորական ժողովը կ'որոշէ Եւրոպահայ Կարմիր Խաչը վերակոչել Արեւմտեան Եւրոպայի Հայ Կարմիր Խաչ անունով:

ԲԱՆԱԶԷԻ ԱՐԵՒՄՏ. ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ Կ. ԽԱՉԻ

ՕՐԻՆԱԿԱՆԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով որ մեր Կարմիր Խաչի օրինականացած չ'ըլլալը պատշաճ կարգով դժուարութիւններ կը ստեղծէ մասնաճիւղերու գործունէութեան համար և մասնաւորապէս խոչնդոտ կը հանգիստանայ մեր մասնաճիւղերու կարսզանալ օգտուելու պետական և հանրային հաստատութիւններէն իրենց այս կամ այն առաջադրութիւնը լրականացնելու համար,

Միւս կողմէ նկատի ունենալով, որ համաձայն գործող միջազգային օրէնքներու մեր կազմակերպութիւնը կարելի է օրինականացնել Կարմիր Խաչի անունով,

Պատգամաւորական ժողովը կ'որոշէ. —

Արտաքին գործունէութեան համար համապատասխան օտար անուն տալով Արեւմտեան Եւրոպայի Հայ Կարմիր Խաչին, օրինականացնել զայն իշխանութիւններու մօտ պատշաճ եղանակով:

ԲԱՆԱԶԷԻ ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԵՐՈՒ

ՓՈՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՅ ՄԱՍԻՆ

Հայ Կարմիր Խաչերը արատասմանի մէջ կեանքի կապուած են երկու հիմնական նպատակով. առաջին՝ տարագիր և զազութային հայ կնոջ կազմակերպուած օժանդակութիւնը իսպաս դնել մեր ընդհանուր ազգային կարիքներու բաւարարման գործին և երկրորդ՝ հայ կիները դրական ազդակ մը դարձնել իր ամիջական միջավայրին մէջ՝ հայ ժողովրդի

բեկորները ֆիզիքապէս, բարոյապէս և ազգայնապէս պաշտպանելու համար :

Այս կրկնակի նպատակները անհրաժեշտ կը դարձնեն, որ արտասահմանի մէջ ցրուած Հայ Կարմիր Խաչերու մէջ այնպիսի փոխ յարաբերութիւն մը հաստատուի որ անոնք կարենան միահամուռ և համադրած ջանքերով հանդէս գալ ազգային ընդհանուր կարիքներու բաւարարման մարդին մէջ և միաժամանակ, բաւականաչափ ազատութիւն ունենան իրենց անմիջական միջավայրի պայմաններէն բղխող խնդիրները ինքնուրոյնաբար լուծելու :

Այս հիմունքներով, արտասահմանեան Հայ Կարմիր Խաչերը ի մի համախմբելու և օրկանապէս իրար հետ շաղկապելու պատիւը կ'իյնայ Ամերիկահայ Կարմիր Խաչին, տրուած ըլլալով, ոչ ան առաջագոյն է բոլոր քոյր կազմակերպութիւններու մէջ, որ անոր օժանդակութիւնը մեր ընդհանուր ազգային կարիքներու բաւարարման գործին մէջ, անհամեմատօրէն մեծ եղած է և որ ան արդէն ձեռնարկած է Հայ Կ. Խաչերու համախմբման գործին՝ օրկանական կապ հաստատելով Յունաստանի Կարմիր Խաչին հետ և կենդանի յարաբերութիւններ մշակելով միւս Հայ Կարմիր Խաչերու հետ :

Այս ամէն նկատառութեամբ պատգամաւորական ժողովը կը հրահանգէ Կ. Վարչութեան :

1. Եռանդուն կերպով հետամտիլ, որ արտասահմանի բոլոր Հայ Կարմիր Խաչերը ի մի ձուլուին մէկ ընդհանուր Հայ Կարմիր Խաչի կազմակերպութեան մէջ՝ պահելով, ապակեղրոնացման սկզբունքով, իրենց ինքնուրոյնութիւնը տեղական գործերու մէջ :

2. Մինչդեռ ընդհ. Հայ Կարմիր Խաչի կեղրոնի հաստատումը՝ ճանաչել Ամերիկահայ Կարմիր Խաչի կեղր. վարչութիւնը իրրեւ ընդհանուր կեղրոնական վարչութիւն, և ընդհանուր ազգային կարիքներու բաւարարման գործին մէջ զեկաւարտիլ անոր սրտումներով և ցոցմունքներով :

3. Այս երկու կէտերու շուրջ Ամերիկահայ Կարմիր Խաչի Կ. Վարչութեան հետ համաձայնութեան գալէ վերջ՝

Ա. Անոր տրամադրել Արեւմտեան Եւրոպայի Հայ Կար-

միր Խաչի Կ. Վարչութեան կազմակերպական հասոյթնե-
րուն 25 թիւը :

Բ. Իրաւունք ստանալ գործածելու Ամերիկահայ Կար-
միր Խաչի գինանշանը արեւմտեան Եւրոպայի Հ. Կ. Խաչի
կնիքին համար :

Գ. Ճշտել Ամերիկահայ Կ. Խաչի Կ. Վարչութեան հետ,
թէ ինչ պայմաններով և քանի ձայնի իրաւունքով Արեւ-
մտեան Եւրոպայի Հ. Կ. Խաչը պէտք է մասնակցի Ամերի-
կահայ Կարմիր Խաչի պատգամաւորական ժողովին :

Դ. Ճշտել Ամերիկահայ Կ. Խաչի Կ. Վարչութեան
հետ թէ Արեւմտեան Եւրոպայի Հ. Կ. Խաչի կանոնադիրը
ո՞ր կեանքու մէջ և ինչ փոփոխութիւններու պէտք է են-
թարկուի ծրագրուած միացումը իրականացնելու համար :

**ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ Հ. Կ. ԽԱՉԻ
ԿԱՆՈՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Պատգամաւորական ժողովը քննելով այն առաջարկ-
ները, որ կը ներկայացնէ կանոնադրի քննութեան յանձնա-
խումբը, նախազօծի մէջ կատարուելիք փոփոխութիւններու
մասին, աչքի առաջ ունենալով այն դիտողութիւնները, որ
պատգամաւորներէն ոմանք ըրին յանձնախմբի առաջարկած
նախազօծի հրդ. յօդուածի մասին ուր կը շօշափուի Հ. Կարմիր
Խաչի երկսեռ ըլլալու ինդիրը և նկատի առնելով Պատգ-
ժողովի բանաձեւը Հ. Կարմիր Խաչերու փոխյարարելու-
թեանց մասին կ'որոշէ.

1. Հաստատել Կանոնադրի Յանձնախմբի նախադիժը
իրը Արեւմտեան Եւրոպայի Հայ Կ. Խաչի կանոնադիր :

2. Չտարածել այդ կանոնադրի հրդ. յօդուածի տրա-
մադրութիւնը — Հ. Կ. Խաչը երկսեռ դարձնելու մասին —
այն մասնաճիւղերուն վրայ, որոնք տեղական պայմաններու
հաշուառութեամբ կը ցանկանան մնալ միասեռ կանացի
կազմակերպութիւն :

3. Լիազօրել Կ. Վարչութիւնը, Արեւմ. Եւր. Հայ Կար-
միր Խաչի անունէն, կատարել կանոնադրի մէջ այն բոլոր
փոփոխութիւնները, որոնք անհրաժեշտ կը նկատուին Հայ

Կ. Խաչերու փոխարարերութեանց վերաբերեալ բանաձևի տրամադրութիւնները իրականացնելու համար :

Ն. Ամերիկահայ Կ. Խաչի հետ օրինապէս միանալու պարագային սոյն կանոնադրութիւնը նկատել իբրև «Ներքին կանոնագիր» Արեւմտ. Եւր. Հայ Կ. Խաչի.

Ք Ա ՆՅ Ա Ձ Ե Ի

Մանուկներու եւ ծննդաբեր կանանց պաշտպանութեան գործի մասին

Պատգամաւորական ժողովը նկատի առնելով այն թշուառ վիճակը, որ կապրին Արեւմ. Եւրոպայի կարգ մը վայրերու մէջ հայ չքաւոր մանուկները եւ ծննդաբեր կանայք որոնք յաճախ սնունդի պակասի եւ աղքատութեան պատճառով կը փճանան՝ յատուկ պարտականութիւն կը դնէ Կ-Վարչութեան եւ մասնաճիւղերուն վրայ այս մանուկներու եւ կանանց վիճակի ամօքմանը, իրենց կարողութեանը սահմաններուն մէջ նպաստելու : Այս նպատակաւ առանձնապէս կը յանձնարարուի Հայ Կ. Խաչի կեդրոնի եւ տեղական կազմակերպութիւններուն դիւրութիւններ ստեղծել, որ յիշեալ մանուկներն ու կանայք կարենան օգտուիլ այն պետական եւ հանրային հաստատութիւններէն, որոնք նմանօրինակ գործերով կը զբաղին :

Բ Ա Ն Ա Ձ Ե Ի

Ժողովրդի առողջապահական եւ բժշկական գործին սատարելու մասին

Պատգամաւորական ժողովը նկատի առնելով արեւմ. Եւրոպայի եւ մասնաւորապէս Ֆրանսայի մէջ հաստատուած կարգ մը հայ գաղութներու անմխիթար վիճակը առողջապահական պայմաններու եւ բժշկական խնամքի տեսակէտներէն, կը հրահանուի Կեդր. Վարչութեան ,

1. Աջակցիլ բժշկատառողջապահական գրգռկներու եւ հանդէսներու տարածմանը հայ ժողովրդի մէջ :

2. Զարարերութեան մէջ մտնել հայ բժշկական ընկերութիւններու հետ դիւրութիւններ ստեղծելու կարիքաւոր հայ գաղութներու մէջ հայ հիւանդի խնամումը հայ բժշկի ձեռքով կատարելու :

Ճ. Օժանդակել մասնաճիւղերուն կազմակերպելու բը-
ժըշկա-առողջապահական դասախօսութիւններ՝ առաջնու-
թիւն տալով կանանց և երեխաներու համար շահեկան
նիւթերու :

Բ Ա Ն Ա Չ Ե Ի

Հայ կանանց աշխատանքի պատշաճացնելու մասին

Պատգամաւորական ժողովը քննութեան առնելով
տարազիր և զազութահայ կանանց աշխատանքի ծանր պայ-
մանները և հաստատած ըլլալով, որ հայ կնոջ ձեռքի
աշխատանքը չարաչար կը շահագործուի հայագրի և օտա-
րագրի միջնորդներու կողմէ, որոնք յաճախ ապրուստի նը-
ւազագոյն միջոցներ իսկ չեն ձգեր հայ աշխատաւոր կնոջ
իր զոյութիւնը մարդավայել կերպով պահելու համար :

Կը հրահանգէ Կեդր. Վարչութեանը՝ մասնաճիւղերու
և ձեռնհաս, սրտացաւ ազգայիններու աջակցութեամբ քըն-
նել և պարզել այն միջոցները, որոնց հարկ է հետամուտ
ըլլալ այս շարիքը դարմանելու համար: Իբրեւ այս միջոց-
ներէն մին՝ Պատգ. ժողովը Կ. Վարչութեան ուշադրութիւնը
կը հրաւիրէ աշխատանքի տան զազափարին վրայ՝ հըրա-
հանգելով մինչև յառաջիկայ պատգ. ժողովը ճշդել այն
բոլոր կարելիութիւնները զորս կարելի է նկատի առնել այս
զազափարը իրականացնելու համար :

Բ Ա Ն Ա Չ Ե Ի

Հայ մատաղ սերունդի ազգային դաստիարակութեան մասին

Մեր բեկորներուն, մատաղ սերունդի ազգայնօրէն ա-
ռողջ կրթութիւնը նկատելով Հայ Կ. Խաչի հիմնական նը-
պատակներէն մէկը և միւս կողմէ աչքի առաջ ունենալով,
որ բացի Մարտէյլէն օրհանգած գրեթէ բոլոր շրջաններուն
մէջ ազգային կեանքի քաօսային վիճակին հետեւանքով
մտացութեան տրուած է ազգային կրթութեան գործը և մեր
մատաղ սերունդը մատնուած ստոյգ այլասերման վտանքին :

Պատգամաւորական ժողովը կը գտնէ, որ այն վայրե-
րուն մէջ, ուր զոյութիւն չունին մանկական կրթարաններ
և մանկապարտէզներ՝ Կ. Խաչի մասնաճիւղերը նախաձեռ-

նութիւն ստանձնելու են համախմբելու հանրային այլեւայլ մարմինները այս օրինակ հաստատութիւններ առաջ բերելու համար: Կ. Խաչի մասնաճիւղերը օժանդակողի զեր եւս կրնան ստանձնել ա՛յն տեղերուն մէջ, ուր արդէն գոյութիւն ունին կամ նախատեսած են սերիշներու կողմէ մանկապարտէզ-կրթարաններ, եթէ այս օժանդակութեան կարիքը կը զգացուի:

Ասոր հետ միասին Կ. Խաչի մասնաճիւղերը հողածուրջլալու են օտար վարժարաններ յաճախող հայ աշակերտներու ազգային դաստիարակութեան՝ անոնց համար արտադպրոցական դասընթացքներ կազմակերպելով կամ այլ միջոցներու ձեռնարկելով:

Բ Ա Ն Ա Չ Ե Ի Ե Ր

Այլեւայլ խնդիրներու մասին

1. Գործիչ-Գործավար, 2. Հայ Կարմիր Խաչի օր, 3. ամսաթիւերթ, 4. Վերաբերմունք գէպի քաղաքական կուսակցութիւնները:

1. Գործիչի եւ Գործավարի խնդիր

Պատգամաւորական ժողովը օգտակար համարելով հանդերձ Կ. Խաչի համար սեփական գործիչ եւ Կեդր. Վարչութեան մէջ վճարովի գործավար մը ունենալը՝ կազմակերպական այս շրջանին անկարելի կը գտնէ այս պահանջի բաւարարումը եւ կը յանձնարարէ Կ. Վարչութեանը անցեալ տարուայ կարգով վարել գործերը մինչեւ որ Կ. Խաչի մասնաճիւղերը, անդամներու քանակը եւ սովորական հասոյթները այնքան շտանան, որ կարելի ըլլայ սեփական գործիչ եւ վճարովի գործավար պահել առանց կազմակերպութիւնը նիւթական ծանր բեռան տակ գնելու:

2. Հայ Կարմիր Խաչի օր

Հ. Կ. Խաչի նպատակները ժողովրդականացնելու եւ անոր ընդհանուր նպատակներու համար նիւթական միջոցներ հայթայթելու առաջադրութեամբ, Պատգամաւորական ժողովը կը հրահանդէ Կ. Վարչութեանը որոշել տարուայ

մէջ օր մը իբրեւ Հայ Կ. Խաչի օր, և այդ օրը ամէն տեղ
հանդէսներ կամ այլ ձեռնարկներ կատարել յօգուտ Կ. Խաչի:
Այս ձեռնարկներու զուտ արդիւնքին 75 010ը Կ. Խաչի
ճիւղերը պարտաւոր են փոխադրել Կ. Վարչութեանը :

3. Ամսաթերթի հարց

Պատգ. Ժողովը քննելով Վալանսի մասնաճիւղի առա-
ջարկը բժշկա-առողջապահական ամսաթերթ մը հրատա-
րակելու մասին՝ ներկայիս իր ուժերէն և ձեռնհասութենէն
վեր կը նկատէ այս առաջարկի իրագործումը :

Ասոր հետ միասին Պատգ. Ժողովը կը յանձնարարէ
Կ. Վարչութեանը յարաբերութեան մէջ մտնել զոյութիւն
ունեցող բժշկա-առողջապահական թերթերու հետ և ջանալ,
որ անոնք իրենց բովանդակութիւնը յարմարցնեն Հ. Կ. Խաչի
գործնական առաջադրութիւններուն յատկապէս կանանց և
մանուկներու առողջապահութեան վերաբերեալ նիւթերու
տեղ տալով իրենց էջերուն մէջ :

4. Վերաբերմունք դեպի Բողոքական կուսակցութիւնները

Հայ Կարմիր Խաչը իբրեւ համազգային բարենպա-
տակ հաստատութիւն մը, չի կրնար ունէ հակումն ունենալ
դէպի այս կամ այն քաղաքական կուսակցութիւն :

Ասոր հետ միասին Պատգ. Ժողովը պարտք կը սեպէ
վեր հանելու, որ ցայսօր ինքը աջակցութիւն և խրախոյս
գտած է, իր կազմակերպական աշխատանքներու և գործու-
նէութեան մէջ, միմիայն Հ. Յ. Դաշնակցութեան մարմին-
ներու կողմէ :

Այս օժանդակութեան համար իր ջերմ շնորհակալու-
թիւնները յայտնելով Հ. Յ. Դ. Եւրոպայի Կ. Կոմիտէին և
անոր կոմիտէներուն՝ Պատգ. Ժողովը յոյս կը տածէ, որ ան-
ոնք առաջիկային եւս կը շարունակեն իրենց գնահատելի
աջակցութիւնը Հայ Կ. Խաչի գործերուն, մինչև որ մեր
միւս քաղաքական կուսակցութիւնները և ազգային կազմա-
կերպութիւնները շօշափելիօրէն տեսնեն Հ. Կ. Խաչի օգուտ.
կարութիւնը մեր հանրային կեանքին մէջ և բերեն անոր
իրենց բաժին աջակցութիւնը :

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն Ե Ր

Նախահաճուի եւ հաշիւներու մասին

Պատգամաւորական ժողովը ծանօթանալով այն դժուարութիւններուն, որ կը մատնանշէ հաշուեքները և նախահաշուի յանձնախումբը, այս կակմակերպական շրջանին Կ. Վարչութեան համար լրիւ նախահաշիւ կազմելու մասին՝ այս տարուայ համար բաց կը թողու նախահաշուի հարցը, բայց ատոր հետ միասին կը հրահանուէ Կ. Վարչութեան, որ ան իր նիւթական գործառնութիւններու ատեն ղեկավարուի հետեւեալ ցուցմունքներով.

1. Առաջիկայ վեց ամիսներու ընթացքին Արեւմտեան Եւրոպայի և մասնաւորապէս Ֆրանսայի մէջ մասնաճիւղերու ցանցը տարածելէ և դորացնելէ վերջ՝ Կ. Վարչութիւնը այս տարուայ երկրորդ կիսամեակի համար պէտք է նախահաշուային կարգով որոշէ այն սովորական կամ կազմակերպական հասոյթներու գումարները, որ ինքը կակընկալէ մասնաճիւղերէն և այդ գումարի հայթայթումը Բօրայի կարգով առաջադրէ մասնաճիւղերուն, աչքի առաջ ունենալով անոնց անդամներուն քանակը և նիւթական կ'արելիութիւնները :

2. Կ. Վարչութիւնը իր հասոյթներու բաշխումը կը կատարէ հետեւեալ տեղոսային համեմատութիւններով.

Ա. Իր գրեմական և կազմակերպչական պէտքերուն համար	20	առ	հարիւր
Բ. Ամերիկահայ Կ. Խաչին	25	»	»
Գ. Մանուկներու և ծննդարեր կանանց պաշտպանութեան	20	»	»
Դ. Բժշկա-ստողջապահան կարիքներու	16	»	»
Ե. Մատաղ սերունդի դաստիարակութեան ի նպաստ	20	»	»

3. Բոլոր տեսակի յատուկ հասոյթներէն, որ կը դոյանան յատուկ նպատակներով կատարուած ձեռնարկներէ, Կ. Վարչութիւնը պէտք է վար դնէ 25 0/0 ը իրրիւ կազմակերպական հասոյթ և մնացած 75 0/0 ը միայն յատկացնէ յատուկ ձեռնարկներու բուն նպատակներուն :

Այս կէտին տրամադրութեանը չեն ենթարկուիր այն գումարները, որ Կ. Վարչութիւնը կրնայ ստանալ Ամերիկայի Հայ Կ. Խաչէն կամ ուրիշ գրութի հաստատութենէ կամ անհատէ որոշ նպատակներու յատկացնելու համար : Այսօրինակ գումարները, առանց ուրիշ զեղջի կամ յապաւումի կը յատկացուին իրենց անմիջական նպատակներուն :

4. Վերեւ յիշատակուած հաստուածով կարգադրութիւններէ ուրիշ շեղում կատարելու հարկադրանքի պարագային, Կ. Վարչութիւնը պարտաւոր է ստանալ Ամերիկայի Հայ Կ. Խաչի Կեդրոնական Վարչութեան համաձայնութիւնը :

Ծանօթ.— Այս կէտը իրաւական ոյժ կրտսանայ այն պարագային, երբ Արեւմտեան Եւրոպայի Հայ Կ. Խաչի միջեւ կը հաստատուին Պատգ. Ժողովի նախատեսած փոխ յարաբերութիւնները (Տես բոյր կազմակերպութիւններու փոխյարաբերութեանց վերաբերեալ բանածեր) :

Ը Ն Տ Բ Ո Ի Թ Ի Ի Ն

Կեդրոնական Վարչութեան

Պատգամաւորական Ժողովը զազանի քուէարկութեամբ և 2/3 - 3/5 ձայներու առաւելութեամբ ընտրեց Արեւմտեան Եւրոպայի Հայ Կարմիր Խաչի Կեդրոնական Վարչութիւն հետեւեալ կազմով .

1. Ընկերունի Ալանեան
2. » Իսրայէլեան
3. » Ղազարեան
4. » Պաղսասարեան
5. » Սերէնկիլիան
6. Ընկեր Զամալեան

Պատգամաւորական Ժողովը կը լիազօրէ նորընտիր Կեդր. Վարչութիւնը, վճռական ձայնի իրաւունքով հրաւիրել Վարչութեան եօթներորդ անգամը Արեւմտեան Եւրոպայի Հ. Կ. Խաչի բնկերներէն :

